

3110



Էւկ. ԱՏԱԼԻՆԻ ՃԱՌԸ

ՀԱՐՎԱԾԱՑԻՆ ԿՈԼՏՆՏԵՍՍԱԿԱՆՆԵՐԻ

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

1933 թ. ՓԵՏՐՎԱՐԻ 19-ԻՆ

3K33

L-47

ԿՈՒՍԴՐԱԾ
ԵԵՐԵՎԱՆ—1938

3K33
R-47

14 NOV 2009

Ընկեր կոլտնտեսականներ՝ և կոլտնտեսուհիներ։ Յես չեյի յենթաղբում հանդես դալ ձեր համագումարում։ Զեյի յենթաղբում, վորովհետև ինձնից առաջ այստեղ հանդես յեկած հոեստորների ճառերում արդեն ասված ե այն բոլորը, վոր պետք եք ասել, —ասված ե լավ, շեշտակի։ Արժե՞ր արդյոք հանդես դալ դրանից հետո։ Բայց քանի վոր վուք պնդում եք, իսկ ուժը ձեր ծեռքին ե (յերկարածու ծափեր), պարտավոր եմ յենթարկվել։ Կասեմ միքանի խոռք առանձին հարցերի մասին։

1

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ ՄԻԱԿ ՃԻՇԸ ՃԱՆԱՊԱՐՀՆ Ե

Առաջին հարցը, թե ճիշտ ե արդյոք այն ճանապարհը, վորը քոնել ե կոլտնտեսական գյուղացիությունը, ճիշտ ե արդյոք կոլտնտեսային ճանապարհը։

Այդ հարցը պարապ հարց չե։ Դուք, կոլտնտեսությունների հարվածայիններդ, պետք ե վոր կասկածելիս չլինեք, վոր կոլտնտեսությունները կանդած են ճիշտ ճանապարհի վրա։ Դրա համար ել հնարավոր ե, վոր այս հարցը ձեղ ավելորդ թվա։ Բայց վոչ բոլոր գյուղացիներն են մտածում այնպես, ինչպես դուք ։ Դյուլացիների մեջ, այդ թվում նաև կոլտնտեսականների ըրջանում, դեռ քիչ չեն այնպիսի մարդիկ, վորոնք կասկածում են կոլտնտեսային ճանապարհի ճիշտ լինելու վերաբերյալ։ Յեւ զրանում վոչ մի զարմանալի բան չկա։ Իրաք, հարյուրավոր տարիներ են մարդիկ ապրել ինչպես հուռմ, զնացել են հին ճանապարհով, կորացրել են մեջքը կուլակի և կալվածատիրով առաջ, վաշխառուի և սպեկուլյանտի առաջ։ Զի կարելի ասել, վոր այս



3504
38

Խմբ. Ա Ամբիշտմայն
Պրակդայի ենտ համեմատ. Հ. Անվանյան
Տօն խմբ. Ա. Նիքին
Սրազրեց Ա. Տեր-Միրտչյան
Համանված է արտադրության 7 մարտի 1933 թ.
Ստորագրում է տպագրելու 14 մարտի 1933 թ.
Տրամ 30000, Հրատ. № 94, 50-000 տպ. Ա2.
Պատկրություն տպարան. Գառանիք 620. Գյաղիխ 7727 (Բ)

Հին, կասլիութեալիտական ճանապարհը դունում եր ոյուղացիների ճավանությունը: Սակայն, նա, այդ հին ճանապարհը, հարթված, առվորտական ճանապարհ եր, և դեռ վոչ վոք իրականում չեր ապացուցել, թե կարելի յեր վորեն այլ կերպ, ավելի լավ ապրել: Մանալանդ վոր բուրժուատական յերկիրներում մարդիկ դեռև և ապրում են, ինչպես հնում... Եեվ հանկարծ, այդ հին ճահանային կյանքն են ներխուժում բայլշերիները, ներխուժում են մոթորիկ նման և ասում՝ ժամանակն ե թողնել հին ճանապարհը, ժամանակն ե ապրել նոր յեղանակով, կոլտնտեսային յեղանակով, ժամանակն ե ապրել սկսել վոչ այնպես, ինչպես ապրում են բոլորը բուրժուատական յերկիրներում, այլ նոր յեղանակով, արտելային յեղանակով: Իսկ ի՞նչ նոր կյանք ե այդ, ո՞վ ե ճանացում այդ կյանքը: Զինի՞ թե զա հին կյանքից ել վաս գուրսու դաւ ձամենայն գեպս նոր ճանապարհը վոչ-սովորական ճանապարհ ե, չհարթված և զեռ վոչ-ամբողջապես փորձված ճանապարհ և Ավելի լավ չի՞ արդյոք մնալ հին ճանապարհի վրա: Ավելի լավ չի՞ արդյոք չշտապել նոր, կոլտնտեսային ճանապարհին անցնելու: Կարիք կա՞ արդյոք ուսուկ սնել:

Ահա թե ինչպիսի կասկածներ են համակում ներկայումս աշխատավոր գյուղացիության մի մասին:

Պարտավո՞ր ենք արդյոք մենք փարատել այդ կասկածները Պարտավո՞ր ենք արդյոք լույս աշխարհ հանել դրանք, այդ կասկածները, և ցույց տալ, թե ինչ արժեն նրանք: Պարզ ե, վոր պարտավոր ենք:

Հետևաբար, վերն առաջարված հարցը չի կարելի պարապ հարց համարել:

Եեվ այդպես, ճի՞շտ ե արդյոք այն ճանապարհը, վոր բոնել և կոլտնտեսական գյուղացիությունը:

Վորոշ ընկերներ կարծում են, վոր անցումը դեպի նոր ուղին, կոլտնտեսությունների ուղին, մեղ մոտ սկսվել ե յերեք տարի առաջ: Այս մասամբ միայն ճիշտ ե: Իհարկե, կոլտնտեսությունների մասսայական շինարարությունը մեղ մոտ սկսվեց յերեք տարի առաջ: Այս անցումը, ինչպես հայտնի յի, հավերժացավ կուրակության ջախճախումով և չքալորների ու միջակենքի միլիոնավոր մասսաների շարժմամբ դեպի կոլտնտեսությունները: Այս բոլորը ճիշտ ե: Սակայն, վորպեսզի սկսելինք այս մասսայական անցումը դեպի կոլտնտեսություն, պետք եր:

Վոր մեր մեռքին ունենայինք միքանի նախնական պայմաններ և առանց վորի, ընդհանրապես առած, մասսայական կոլտնտեսական շարժում մինել չեր կարող: Նախ և առաջ, հարկավոր եր ուսնենալ խորհրդացին իշխանություն, վորն ողնեց և շարունակում ե ողնել գյուղացիներին կոլտնտեսությունների ճանապարհը բռնելու գործում: Եերկրորդ՝ հարկավոր եր գուրս քչել կալվածառերին ու կապիտալիստներին, խել նրանցից գործարաններն ու հողերը և դրանք հայտարարել ժողովրդի սեփականությունները Եերրորդ՝ հարկավոր եր սանձահարել կուլակությանը և խել նրանցից մեքենաներն ու տրակտորները: Չորրորդ՝ հարկավոր եր հայտարարել, վոր մեքենաներից ու արակտորներից կարող են ոգտվել միմիայն կոլտնտեսությունների մեջ միացած չքավորներն ու միջակեները: Վերջապես, հարկավոր եր ինդուստրացման յենթարկել յերկիրը, կազմակերպել արակտորային նոր արդյունաբերություն, կառուցել գյուղատնտեսական մեքենաշինության նոր գործարաններ՝ կոլտնտեսական գյուղացիությանն առատորեն տրակտորներ ու մեքենաներ մատակարարելու համար: Առանց այդ նախնական պայմանների չեր ել կարելի մտածել մասսայարար կոլտնտեսությունների ուղին անցնելու մասին, վոր սկսվել է Յ տարի առաջ:

Հետևաբար, կոլտնտեսությունների ուղին անցնելու համար անհրաժեշտ եր նախ և առաջ կատարել Հոկտեմբերյան հեղափոխությունը, տապալել կապիտալիստներին ու կալվածառերին, խել նրանցից հողը, գործարանները, կազմակերպել նոր արդյունաբերություն:

Հոկտեմբերյան հեղափոխությամբ ել սկսվեց մեր անցումը նոր ուղին, կոլտնտեսությունների ուղին: Այդ գործն սկսեց նոր ուժով ծավալվել միմիայն յերեք տարի առաջ, վորովհետեւ միամիայն այդ ժամանակներն իրենց ամբողջ ծավալով դրսորվեցին Հոկտեմբերյան հեղափոխության տնտեսական արդյունքները, միամիայն այդ ժամանակ հաջողվեց առաջ մզել յերկրի ինդուստրացումը:

Փողովուրդների պատմությունը բավականաչափ հեղափոխություններ դիմեած: Դրանք Հոկտեմբերյան հեղափոխությունից տարեկանում են նրանով, վոր բոլորն ել միակողմանի հեղափոխություններ ելին: Աշխատավորների շահաղործման մի ձեւ փոխարինվում եր շահաղործման մի այլ ձեռվ, սակայն ինքը շահաղոր-

ծումը մնում եր : Մի տեսակ շահագործողները, կեղեքիչները մոռ
խարինվում եյին այլ տեսակ շահագործողներով ու կեղեքիչներով ;
սակայն իրենք շահագործողներն ու կեղեքիչները մնում եյին :
Միմիայն Հոկտեմբերյան հեղափոխությունն եր, վոր նպատակ
դրեց վոչնչացնել ամեն մի շահագործում, վերացնել բոլոր և
ամեն նեսակ շահագործողներին և կեղեքիչներին :

Սարուկների հեղափոխությունը լիկվիդացիայի յենթարկեց
սորկատերերին և վերացրեց աշխատավորների շահագործման
սորկատիրական ձեր : Սակայն նրանց տեղը նա դրեց ճորտատե-
րերին, հաստատեց աշխատավորների շահագործման ճորտատե-
րական ձեր : Մի տեսակ շահագործողներ փոխարինվեցին այլ
տեսակ շահագործողներով : Սարկատիրության ժամանակ «որեն-
քը» սորկատերերին թույլ եր տալիս սպանելու սարուկներին և
ճորտատիրական կարգերում «որենքը» ճորտատերերին թույլ եր
տալիս «միմիայն» վաճառելու ճորտերին :

Ճորտ գյուղացիների հեղափոխությունը լիկվիդացիայի յեն-
թարկեց ճորտատերերին, վերացրեց շահագործման ճորտատիրա-
կան ձեր : Սակայն նրանց փոխարին նա դրեց կապիտալիստնե-
րին և կալվածատերերին, հաստատեց աշխատավորների շահա-
գործման կապիտալիստական և կալվածատիրական ձերը : Մի
տեսակ շահագործողներ փոխարինվեցին այլ տեսակ շահագոր-
ծողներով : Ճորտատիրական կարգերում «որենքը» թույլ եր տա-
լիս վաճառել ճորտերին : Կապիտալիստական կարգերում «որենքը»
թույլ եր տալիս «միմիայն» գործադրկության, աղքատացման,
քայլայրման, սովամահության մատնել աշխատավորներին :

Միմիայն մեր խորհրդային հեղափոխությունը, միմիայն մեր
Հոկտեմբերյան հեղափոխությունը հարցը դրեց այնպես, վոր
վոչ թե մի տեսակ շահագործողները փոխարինվեն այլ տեսակ
շահագործողներով, վոչ թե շահագործման մի ձեր փոխարինվի
մի այլ ձեռվ, այլ արմատախիլ արվիլ ամեն մի շահագործում,
արմատախիլ արվեն բոլոր և ամեն տեսակ շահագործողները:
բոլոր հարուստները, կեղեքիչները՝ թե՛ հները, թե՛ նորերը (յեր-
կարասն ծափեք) :

Ահա թե ինչու Հոկտեմբերյան հեղափոխությունը նախնա-
կան պայման ու անհրաժեշտ նախադրյալ ե, վոր գյուղացիները
անցնեն նոր, կոլտնտեսական ուղղություն :

Ճի՞շտ վարվեցին արդյոք գյուղացիները, պաշտպանելով

Հոկտեմբերյան հեղափոխությունը : Այո՛, նրանք ճիշտ վարվե-
ցին : Նրանք ճիշտ վարվեցին, վորպէտեա Հոկտեմբերյան հեղա-
փոխությունն ողնեց նրանց իրենց ուսեբքց դեմ շպտելու կալ-
վածատերերին և կապիտալիստներին, վաշխառուներին և կու-
լակներին, առեւրատկաններին և սպեկուլյանտներին :

Սակայն զա հարցի մի կողմն ե : Վոնդել կեղեքիչներին և
վոնդել կալվածատերերին և կապիտալիստներին, սանձահարել
կուլակներին և սպեկուլյանտներին — այդ շատ լավ ե : Բայց
այդ քիչ ե : Զին կապանքներից վերջնականապես աղատազրվելու
համար բավական չի լոկ ջախջախել շահագործողներին : Դրա հա-
մար հարկավոր և նաև կառուցել նոր կյանք, կառուցել այնպիսի
կյանք, վորը հնարավորություն տա աշխատավոր գյուղացուն
բարելավել իր նյութական ու կուլտուրական դրությունը, վեր
բարձրանալ որեց-որ, տարեց-ապրի : Դրա համար հարկավոր և
նոր կարգեր հաստատել գյուղում, կոլտնտեսային կարգել : Դա
հարցի մյուս կողմն եր :

Ինչո՞վ են տարբերվում հին կարգերը նոր, կոլտնտեսային
կարգերից :

Հին կարգերում գյուղացիներն աշխատում եյին ջոկ-ջոկ,
աշխատում եյին հին, պատեհական յեղանակով, աշխատանքի
հին գործիքներով, աշխատում եյին կալվածատերերի և կապի-
տալիստների, կուլակների և սպեկուլյանտների համար, աշխա-
տում եյին՝ ապրելով կիսաքաղց և հարստացնելով ուրիշներին :
Նոր, կուլտնտեսային կարգերում գյուղացիներն աշխատում են
միասին, արտելով, աշխատում են նոր գործիքների՝ տրակտոր-
ների ու գյուղատնտեսական մեքենաների ողնությամբ, աշխա-
տում են իրենց համար, իրենց կուլտնտեսությունների համար,
ապրում են սունց կապիտալիստների և կալվածատերերի,
առանց կուլակների և սպեկուլյանտների, աշխատում են նրա հա-
մար, վոր որ-ավուր բարելավին իրենց նյութական ու կուլտու-
րական գրությունը : Այստեղ, զին կարգերում կառավարությու-
նը բուրժուական և, պաշտպանում ե հարուստներին՝ աշխատա-
վոր գյուղացիների դեմ : Այստեղ, նոր, կուլտնտեսային կարգե-
րում կուռավարությունը բանտիրա-գյուղացիական և և նա
պաշտպանում ե բանտիրներին ու գյուղացիներին բոլոր ու ամեն
տեսակ հարուստների դեմ : Զին կարգերը տանում են գեպի կա-
պիտալիզմ, նոր կարգերը՝ դեպի սոցիալիզմ :

Ահա ձեղ յերկու ուղի՝ կապիտալիստական ուղին և սոցիալիստական ուղին, դեպի առաջ, դեպի սոցիալիզմը տանող ուղին և դեպի հետ, դեպի կապիտալիզմը տանող ուղին:

Կան մարդիկ, վորոնք կարծում են, թե կարելի յե վոտք չնել ինչ-վոր մի յերբորդ ուղի: Այդ յերբորդ ուղուն, վորը հայտնի չե վոչ վոքի, առանձնապես սիրով կառչում են այն մի քանի տատանվող ընկերները, վորոնք դեռ լիովին չեն համոզվել, թե կոլտնտեսական ուղին ճիշտ ե: Նրանք ուղում են, վոր մենք վերադառնաք. Հին կարգերին, վերադառնաք անհատական տնտեսությանը, բայց առանց կապիտալիստների ու կալվածատերերի: Ընդ ոմին նրանք ուղում են, վոր մենք թողնենք քմիթիայն» կուլակներին և մյուս մանր կապիտալիստներին, վորպես մեր տնտեսական կարգերի որինական յերկույթ: Բայց երոք դա յերբորդ ուղին չե, այլ յերկորդ ուղին, դեպի կապիտալիզմ տանող ուղին: Վորովհետեւ ի՞նչ և նշանակում վերադառնալ անհատական տնտեսությանը և վերականգնել կուլակությունը: Այդ նշանակում և վերականգնել կուլակային ստրկությունը, վերականգնել գյուղացիության շահագործումը կուլակության կողմից և իշխանություն տալ կուլակին: Սակայն մի թե կարելի յե վերականգնել կուլակությունը և դրա հետ միասին պահպանել խորհրդային իշխանությունը: Վո՛չ, չե կարելի: Կուլակության վերականգնումը կհանդի կուլակային իշխանության ստեղծմանը և խորհրդային իշխանության վերացմանը, հետեաբար նա կհանդի բուրժուական կառավարության ստեղծմանը: Իսկ բուրժուական կառավարության ստեղծումն իր հերթին կհանդի կալվածատերերի ու կապիտալիստների վերականգնմանը, կապիտալիզմի վերականգնմանը: Այսպես կոչված յերբորդ ուղին իրոք յերկորդ ուղին ե, կապիտալիզմին վերադառնալու ուղին: Հարցը գյուղացիներին՝ ուղում են արդյոք նրանք վերականգնել կուլակային ստրկությունը, վերադառնալ կապիտալիզմին, վերացնել խորհրդային իշխանությունը և վերականգնել կալվածատերերի ու կապիտալիստների իշխանությունը: Հարցը նրանց և դուք կիմանաք, թե վո՞րն ե միակ ճիշտ ուղին համարում աշխատավոր գյուղացիների մեծամասնությունը:

Հետեաբար, կա միայն յերկու ուղի՝ կամ առաջ, դեպի վեր, դեպի նոր կոլտնտեսային կարգերը, կամ հետ, դեպի վար, դեպի

Ֆեն, կուլակային-իշխապիտալիստական կարգերը: Յերբորդ ուղի չկա:

Աշխատավոր գյուղացիությունը ճիշտ վարվեց՝ մերժելով կալիստալիստական ուղին և վոտք դնելով կոլտնտեսական շնարարության ուղին:

Առում են, վոր կոլտնտեսությունների ուղին ճիշտ ուղի յե բայց նա դժվարին ե: Դա մասմբ միայն ճիշտ ե: Իհարկե, այն մանապարհին դժվարություններ կան: Լավ կյանքը ձրի չի արրավում: Բայց բան այն ե, վոր գյուղացի դժվարություններն արդեն անցել են, իսկ այն դժվարությունների մասին, վորոնք իանգնած են ձեր առաջ, չարժե նույնիսկ լուրջ խոսել: Համենայն դեպօ՝ համեմատած այն դժվարությունների հետ, վոր ապրեցին բանվորները 10—15 տարի առաջ, ներկայիս ձեր դժվարությունները, ընկեր կոլտնտեսականներ, յերեխայի խաղալիք են թուրմ և Սյստեղ հանդես յմկան ձեր ճառախոսները և գովեցին լենինգրագի, Մուկվայի, Խարկովի, Դոնբասի բանվորներին: Նրանք ասացին, թե նրանք՝ բանվորները նվաճումներ ունեն, իսկ դուք՝ կոլտնտեսականները շատ ամելի քիչ նվաճումներ ունեք: Յես կարծում եմ, վոր ձեր հոեսորների ճառերում նկատվում եր նույնիսկ ընկերական վորոշ նախանձ, թե՝ վորքան լավ կլիներ, յեթե մենք՝ կոլտնտեսական գյուղացիներս ել ունենայինք նույն պիսի նվաճումներ, ինչպիսիք ունեք դուք՝ լենինգրագի, Մոսկվայի, Դոնբասի, Խարկովի բանվորներդ... Այդ բոլորը լավ ե: Բայց դուք դիտեք, թե ի՞նչ են նստել այդ նվաճումները լենինգրագի, Մոսկվայի բանվորներին, ինչպիսի գրկանքներ են կրել նրանք, վորպեսողի ձեռք բերեն վերջապես այդ նվաճումները: Յես կարող եյի պատմել ձեղ մի քանի փասուեր բանվորների 1918 թվականի կյանքից, յերբ ամբողջ շարաթներով վոչ մի պատառ հաց չեյին տալիս բանվորներին, ել չեմ խոսում մսի և այլ սնընդամեթերքների մասին: Այդ ըշանում լավագույն ժամանակներն եյին համարվում այն որերը, յերբ հաջողվում եր լենինգրագի ու Մոսկվայի բանվորներին տալ մի ութերորդ ֆունտ ու հաց, այն ել կիսով չափ քուսպ խառնած: Յեվ այդ տեսք վոչ թե մի ամիս, վոչ թե կես տարի, այլ ամբողջ յերկու տարի: Սակայն բանվորները համբերում եյին, չեյին ընկճագում, վորովհետեւ դիտեցին, վոր կդան արկելի լավ ժամանակներ և նրանք վճռական հաջողություններ ձեռք կրերեն: Յեվ ի՞նչ՝ դուք տեսնում եք,

վոր բանվորները չսխալվեցին։ Դե համեմատեցեք ձեր դժվարություններն ու զրկանքները բանվորների ապրած դժվարությունների ու զրկանքների հետ և դուք կտեսնենք, վոր դրանց մասին շարժե նույնիսկ Աջորեն խոսել։

Ի՞նչ ե պահանջվում կոլտնտեսային շարժումն առաջ մղելու համար, կոլտնտեսային շմարաբությունն ամբողջ թակով ծառվալելու համար։

Դրա համար նախ և առաջ պահանջվում է, վոր կոլտնտեսություններն ունենան միանդամայն ապահովված և մշակելու պիտանի հող։ Ունե՞ք գուք այդ հողը։ Այո՛, ունեք։ Հայտնի յեւ վոր բոլոր լավագումն հողերը հանձնված են կոլտնտեսություններին, ամրացված են նրանց հաստատապես։ Հետեւարար, կոլտնտեսականները կարող են մշակել ու բարելավել այդ հողը, մարդան ուղեն, առանց վախենալու, վոր նա կընկնի ուրիշի ձեռքը։

Եերկրորդ՝ դրա համար պահանջվում է, վոր կոլտնտեսականները կարողանան ոդտագործել տրակտորներ ու մեքենաներ։ Ունե՞ք գուք դրանք։ Այո՛, ունեք։ Բոլորին հայտնի յեւ, վոր մեր տրակտորի զործարանները, դյուզատնտեսական մեքենաներ տպարատող դործարանները նախ և առաջ ու դիսավորապես աշխատում են կոլտնտեսությունների համար, հայթայթելով նրանց ժամանակից բոլոր գործիքները։

Դրա համար, վերջապես, պահանջվում է, վոր կառավարությունն ըստ ամենայնի ոժանդակի կոլտնտեսական զյուզացիներին մարդկանցով ու Փինանսներով և ճմողնի, վոր թշնամի դասակարգերի թափթփուկները քայլայեն կոլտնտեսությունները։ Ունե՞ք գուք այդպիսի կառավարություն։ Այո՛, ունեք։ Նա կոչովում և բանվորա - զյուզացիական խորհրդային կառավարություն։ Ցույց տվեք ինձ մի յերկիր, վորաեղ կառավարությունը ողաշտպանի վոչ թե կապիտալիստներին ու կարվածատերերին, վոչ թե կուտակներին և այլ հարուստներին, այլ աշխատավոր դյուզացիներին։ Աշխարհիս յերեսին չկա և չի յեղել այդպիսի յերկիր։ Միմիայն մեղ մոտ, խորհրդային յերկրում գոյություն ունի մի կառավարություն, վոր ջերմ ոլաշտպան և կանգնած բանվորներին, կոլտնտեսական դյուզացիներին, քաղաքի ու դյուզի բոլոր աշխատավորներին՝ ընդդեմ բոլոր հարուստների և շատ զագործողների (յերկարան ծավել)։

Հետեւարար, դուք ունեք այն ամենը, ինչ վոր անհրաժեշտ է կոլտնտեսական չինարարությունը ծավալելու և հին կտապանք ներից կատարելապես աղատազրվելու համար։

Ձեղանից միայն մի բան ե պահանջվում՝ աշխատել աղնվուրեն, բաշխել կոլտնտեսության յեկամուտներն ըստ աշխատանքի, պահպանել կոլտնտեսական գույքը, պահպանել տրակտորներն ու մեքենաները, լավ ինամել ձին, կատարել ձեր բանվորագյուղացիական սկետության առաջարանքները, ամբացնել կոլտնտեսությունները և գուրս վնայել կոլտնտեսություններից այնտեղ խցկած կուլակներին ու յենթակուլակներին։

Դուք յերեխի կհամաձայնեք ինձ հետ, վոր հաղթահարել այդ դժվարությունները, այսինքն՝ աշխատել աղնվուրեն և պահպանել կոլտնտեսական գույքը — ախքան ել դժվար չեւ։ Մանավանդ վոր այժմ ձեր աշխատանքը գնում ե վոչ թե հարուստներին, վոչ թե շահագործողներին, այլ ձեզ, ձեր սեփական կոլտնտեսություններին։

Դուք տեսնում եք, վոր կոլտնտեսական ուղին, սոցիալիզմի ուղին միակ ճիշտ ուղին և աշխատավոր գյուզացիների համար։

ՍԵՐ ՄՈՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆ Ե՛ ՈՒՆԵՎՈՐ ԴԱՐՁՆԵԼ ԲՈԼՈՐ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻՆ

Ցերկորդի հարցն ե այն, թե ինչ ենք ձեռք բերել մենք նոր ճանապարհին, մեր կոլտնտեսական ճանապարհին, ինչ ենք ժամադիր ձեռք բերելու առաջիկա 2—3 տարում։

Սոցիալիզմը լավ բան է։ Ցերջանիկ սոցիալիստական կյանքն անպայման լավ բան է։ Սակայն այդ բոլորն ապահայի գործն է։ Այժմ զվաճաղոր հարցն այն չե, թե ինչ ձեռք կրերենք մենք առ պաղայում։ Գլխավոր հարցն այն է, թե ինչ ենք ձեռք բերել մենք արդեն ներկայում։ Գյուղացիությունը վոտք գրեց կոլտնտեսական ուղին։ Այդ շատ լավ է։ Սակայն ի՞նչ ձեռք բերեց նա այդ ճանապարհին։ Ի՞նչ շոշափելի բան ձեռք բերինք մենք՝ ընթանալով կոլտնտեսական ուղիով։

Մենք ձեռք բերինք այն, վոր ոգնեցինք չքավորների միջուռ նալոր մասսաներին մտնելու կոլտնտեսությունները։ Մենք ձեռք բերինք այն, վոր մտնելով կոլտնտեսությունները և ոգտվելով այնտեղ լավագույն հոգից, արտադրության լավագույն գործքունքունքից, չքավորների միլիոնավոր մասսաները բարձրացան միշտակների մակարդակը։ Մենք ձեռք բերինք այն, վոր չքավորների միլիոնավոր մասսաները, վորոնք առաջ կիսաքաղց կյանք ենք վարում, այժմ կոլտնտեսություններում գարձել են միջակներ, դարձել են ապահովված մարդիկ։ Մենք ձեռք բերինք այն է վոր կասեցրինք գյուղացիների շերտավորումը չքավորների ու կոլտակների, ջախջախեցինք կոլտակներին, ոգնեցինք չքավորներին՝ դառնալու իրենց աշխատանքի տերը կոլտնտեսությունների, մեջ, միջակներ դառնալու։

Ի՞նչ դրություն դոյլություն ուներ նախքան կոլտնտեսական չինարարության ծավալումը՝ և տարի առաջ։ Հարստանում, վեր եյին բարձրանում կուլակները։ Աղքատանում, քայքայմում։ Եյին չքավորները, ստրուկ զանալով կուլակներին։ Դեպի վեր գուլցում միջակները և ամեն անկամ։ Վայր եյին գլորվում, լրացնելով չքավորների շարքերը, ուրախացնելով կուլակներին։ Դժվար չե հասկանալ, վոր այդ ամրող իրարանցումից շահում եյին միմիայն կուլակները և թերեւ ունեռներից վոմանք։ Գյուղի յուրաքանչյուր 100 տնտեսությունից կարելի յեր գտնել 4—5 կուլակյային տնտեսություն, 8 կամ 10 ունեռոր տնտեսություն, 45—50 միջակ և մոտ 35 չքավոր տնտեսություն։ Հետեւաբար, գյուղացիական բոլոր տնտեսությունների առնվազն 35 տոկոսը կազմում եյին չքավորները, վորոնք հարկադրված եյին կրել կուլակյային ստրկության լուծը։ Ել չեմ խոսում միջակների մակավազոր խավերի մասին, վորոնք կաղմում եյին միջակ գյուղացիության ավելի քան կես մասը և վորոնք իրենց գրությամբ քիչ բանով եյին տարբերվում չըստ վլորներից, ուղղակի կախումն ունելին կուլակներից։

Մավալելով կոլտնտեսական չինարարությունը, մենք ձեռք բերինք այն, վոր վոչնչացրինք այդ խառնաշխությունը, առ նարդարությունը, ջախջախեցինք կուլակյային ստրկությունը։ Ե չքավորների այդ ամրող մասսան ներդրավեցինք կոլտնտեսությունները, ապահով վիճակի մեջ դրինք նրանց, բարձրացրինք միջակների մակարդակին, վորոնք կարող են ոգտագործել կոլտնտեսային հողը, արտօնությունները հոգուտ կոլտնտեսությունների, ողտագործել տրակտորները, գյուղատնտեսական մեքենաները։

Իսկ ի՞նչ ե նշանակում այդ։ Այդ նշանակում ե, վոր առանվազն 20 միլիոն գյուղացիական աղքաբնակություն, առնվազն 20 միլիոն չքավորներ փրկեցինք մենք աղքատությունից, քայքայումից, փրկեցինք կուլակյային ստրկությունից և կոլտնտեսությունների չնորհիկ դարձրինք ապահով մարդիկ։

Այդ մեծ նվաճում ե, ընկերներ։ Այդ այնպիսի նվաճում ե, վորպիսին գեռ չի տեսել աշխարհը, վորին չի հասել գեռ վիզեատություն աշխարհում։

Ահա ձեզ կոլտնտեսական շինարարության պործնական չոշափելի արդյունքները, այն բանի արդյունքները, վոր դյուղաց ցուությունը կոլտնտեսությունների ուղին:

Սակայն դա մեր առաջին քայլն ե միայն, մեր առաջին նվաճ ձումը կոլտնտեսական շինարարության ճանապարհին:

Միաւ կլիներ, յեթե կարծէինք, վոր մենք պետք ե կանոն առանք այդ առաջին քայլի վրա, այդ առաջին նվաճման վրա: Վո՞չ ընկերնե՛ր, մենք չենք կարող կանոն առնել այդ նվաճման վրա: Արդեսդի առաջ շարժվենք և վերջնականաւեն ամրացնենք կոլտնտեսությունները, մենք պետք ե անենք յերկրորդ քայլը, մենք ունագ ե ձեռք բեցենք նոր նվաճում: Վո՞րն ե այդ քայլը. այդ քայլն ե՝ բարձրացնել կոլտնտեսականներին, այդ նախկին չքայլորելին, նախկին միջակներին ավելի բարձր աստիճանի: Այդ քայլն ե՝ ունենոր դարձնել բոլոր կոլտնտեսականներին: Այստեղ, ընկերնե՛ր, ունենոր դարձնել (յերկարածու ծափեր):

Մենք ձեռք բերինք այն, վոր կոլտնտեսությունների չնորհիվ բարձրացրենք չքավորներին միջակների մակարդակը: Այդ շատ լավ է: Բայց այդ քիչ ե: Այժմ մենք պետք ե ձգտենք անելու մի քայլ և գեպի առաջ՝ ողնելու բոլոր կոլտնտեսականներին, նախկին քավորներին, նախկին միջակներին՝ բարձրանալու ունենուների մակարդակը: Դրան կարելի յե հասնել, և մենք պետք ե հասնենք ինչ գնով ուղղում ե լինի (յերկարածու ծափեր): Այժմ մենք ունենք այն ամենը, ինչ վոր անհրաժեշտ ե մեր այդ նպատակին հասնելու համար: Այժմ վաս են ողտագործվում մեր մեքնաներն ու տրակտորները: Մեր հողը լավ չի մշակվում: Բավական ե մրայն բարելավել մեքնաների ու արակտորների ողտագործումը, բայտական ե միայն բարելավել հողի մշակումը, և մենք կհասնենք այն բանին, վոր յերկու անդամ, յերեք անդամ կավելացնենք մեր մթերքների քանակը: Իսկ այդ միանդամայն բավական ե մեր բոլոր կոլտնտեսականներին կոլտնտեսական դաշտերի ունենոր աշխատա:

Առաջ թիճակի մեջ եր ունենուների հարցը: Ունենոր գառանալու համար պետք եր զրկել իր հարկաններին, պետք եր շահագործել նրանց, ավելի թանող վաճառել նրանց և տվելի եժան զնել նրանցից, վարձել բատրակներից վամանց, կարգին շահագործել նրանց, բավականաչափ դրամագլուխ կուտակել և ապա ամրանալով, կուլակ դատնալ:

Վոր առաջ, անհատական անտեսության պայմաններում, ունենորներն անվատահություն ու ատելություն են առաջացնում չքավորների ու միջակների մեջ: Այժմ վործն այլ վիճակի մեջ ե: Այժմ պայմաններն ել այլ են: Վորպեսզի կոլտնտեսականներն ունենոր գառնան, այժմ բնավ անհրաժեշտ չե զրկել կամ շահագործել հարեաններին: Ասենք՝ հեշտ ել չե այժմ շահագործել վորեն մեկին, վորովհետեւ հողի մասնավոր սեփականություն կամ վարձակալություն չկա այլևս մեղ մոտ, մեքնաներին ու տրակտորները պատկանում են պետությանը, իսկ կապիտալ ունեցող մարդիկ այժմ մողայից ընկել են կոլտնտեսություններում: Այդպիսի մուտ յեղել ե, բայց արդեն վերացել ե առհավետ: Վորպեսզի կոլտնտեսականներն ունենոր գառնան, այժմ անհրաժեշտ ե միայն մի բան՝ աշխատել կոլտնտեսության մեջ աղնվորեն, ճիշտ ողտագործել տրակտորներն ու մեքնաները, ճիշտ ողտագործել յժկանները, ճիշտ մշակել հողը, ողահպաննել կոլտնտեսական սեփականությունը:

Յերբեմն ասում են՝ քանի վոր սոցիալիզմ ե, եւ ի՞նչ կարիք կա աշխատելու: Աշխատում ելնեք առաջ, աշխատում ենք այժմ, միաթե ժամանակակի չե աշխարել աշխատելուց: Այդպիսի խոսքերը հիմնովին սխալ են, ընկերնե՛ր: Դա լողը երի փիլիսոփայությունն ե և վոչ թե աղնիվ աշխատողների: Սոցիալիզմն ամենենին չի ժխտում աշխատանքը: Ընդհակառակը, սոցիալիզմը կառուցվում ե աշխատանքով: Սոցիալիզմն ու աշխատանքն անբաժանելի յեն միմ բանցից: Մեր մեծ ուսուցչէ լենինն ասել ե. «Ով չի աշխատում, նա չի ուտի»: Ի՞նչ է նշանակում այդ, ո՞ւմ դեմ են ուղղված լենինի այդ խոսքերը: Տահազործիչների գեմ, նրանց գեմ, ովքեր իրենք չեն աշխատում, այլ հարկադրում են աշխատել ուրիշներին և հարրատանում են ուրիշների հաջին: Յո՞ւ ում դեմ: Նրանց գեմ, ովքեր իրենք ծուլություն են անում և ուղղում են շահկել ուրիշների հաջումն: Սոցիալիզմը պահանջում ե վոչ թե ծուլություն անել, այլ պահանջում ե, վոր բոլոր մարդիկ աշխատեն ալիմփորեն, աշխատեն վոչ թե ուրիշների համար, վոչ թե հարուստների ու շահագործողների համար, այլ իրենց համար, հասարակության համար: Յել յեթե մենք աշխատենք աղնվորեն, աշխատենք մեզ համար, մեր կոլտնտեսությունների համար, ապա կհասնենք այն բանին, վոր 2—3 տարուց բոլոր կոլտնտեսականներին, թե՞ նախկին

Հքաւլորներին և թե՛ նախկին միջակներին կհասցնենք ունեռքի մաս
կարդակին, այնպիսի մարդկանց մտկարդակին, վարոնք ոգտվում
են լիտուատ մթերքներից և կատարելապես կուլտուրական կյանք
են վարում: Այդ և այժմ մեր մոտակա խնդիրը: Դրան կարող ենք
հասնել մենք, դրան պետք է հասնենք ինչ գնով ել լինի (յերկա-
րատն ծափեր):


3

ԱՌԱՋԻՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իսկ այժմ թույլ տվեք անցնել մի քանի առանձին դիտողաւ-
թյունների:

Նախ և առաջ զյուղի մեր կուսակցականների մասին: Զեր
մեջ կան կուսակցականներ, բայց ավելի շատ են անկուսակցական-
ները: Այդ շատ լավ է, վոր համազումարին հավաքվել են ավելի
շատ անկուսակցականներ, քան կուսակցականներ, վորովհետև հենց
անկուսակցականներին ե, վոր նախ և տուաջ անհրաժեշտ ե մաս-
նակից զարձել մեր գործին: Կան կոմունիստներ, վորոնք անկու-
սակցական կոլտնտեսականներին մոտենում են բայլչեկորեն: Բայց
կան նաև այնպիսիները, վորոնք գոռողանում են իրենց կուսակցա-
կանությամբ, իրենցից հեռու յեն պահում անկուսակցականներին: Այդ
լավ չե, վնասակար է: Բայլչեկների ուժը, կոմունիստների
ուժն այն ե, վոր նրանք դիտեն շրջապատել մեր կուսակցությունն
անկուսակցական ակտիվի միլիոնավոր աշխատողներով: Մենք,
բայլչեկներս, չեմինք ունենա այն հաջողությունները, վոր ունենք
այժմ, յեթե չկարողանայինք կուսակցության կողմը նվաճել մի-
լիոնավոր անկուսակցական բանվորների ու զյուղացիների վստա-
հությունը: Խսկ ի՞նչ և պահանջվում դրա համար: Դրա համար
պահանջվում ե, վոր կուսակցականները չմեկուսանան անկու-
սակցականներից, վոր կուսակցականները չամփոփեն իրենց կու-
սակցական պատյանում, վոր նրանք չպարձենան իրենց կուսակցա-
կանությամբ, այլ լսեն անկուսակցականների ծայնը, վոր նրանք
կը միայն սովորեցնեն անկուսակցականներին, այլև սովորեն
նրանցից:

Զպետք և մոռանալ մի կուսակցականները յերկնքից չեն



բնում: Գլաք և հիշել, վոր կուսակցականները բոլորն ել մի ժամանակ անկուսակցականներ են յեղել: Այսոր նա անկուսակցական է, վաղը կուսակցական կտառնա: Խսկապես ի՞նչ կա այս տեղ քիթը բարձրացնելու: Մեր մեջ, հին բայլչերիներիս մեջ քիչ չեն զանդի այնուիսի մարդիկ, վորոնք կուսակցության մեջ աշխատում են 20—30 տարի: Բայց չե՞ վոր մենք ինքներս ել մի ժամանակ անկուսակցականներ ենք յեղել: Ի՞նչ կպատահեր մեղ, յեթի 20—30 տարի առաջ մենք բանի տեղ ընելին մեր այն ժամանակվա կուսակցականները և կուսակցությունից հեռու պահելին մեղ: Կարող ե պատահել, վոր այն ժամանակ մենք կուսակցությունից բաժանված լինելինք մի շարք տարիներ: Խոլ մենք՝ հին բայլչերներս, չե՞ վոր հետին մարդիկը չենք, ընկերներ (ուրախ աշխատությունի, յերկարան ծափեր):

Ահա թե ինչո՞ւ մեր կուսակցականները, ներկայիս յերիտասարդ կուսակցականները, վորոնք յերեմն բարձր են պահում իրենց քիթն անկուսակցականների առաջ, պետք ե հիշեն այս բոլորը, միտք ե հիշեն, վոր վոչ թե զուողությունը, այլ համեստությունն է, վոր զարդարում ե բայլչերին:

Այժմ մի քանի խոսք կանանց, կոլտնտեսութիւնների մասին: Կանանց հարցը կոլտնտեսություններում մեծ հարց է, ընկերներ: Յես գիտեմ, վոր ձեզանից շատերը թերաքնահատում են կանանց, նույնիսկ ծիծաղում են նրանց վրա: Սակայն դա սխալ է, ընկերներ: Ըստը սխալ: Այստեղ բանը միայն այն չե, վոր կանայք կաղմում են ազգաբնակության կեսը: Այստեղ նախ և առաջ բանն այն է, վոր կոլտնտեսական շարժումն առաջ մղեց զեկալար պաշտօնների համար մի շարք հիանալի, ընդունակ կանանց: Դիտեցեք համարումարը, նրա կաղմը, և զուք կտեսնեք, վոր կանայք վարդուց արդեն հետամնաց վիճակից անցել են առաջավորների շարքերը: Կոլտնտեսություններում կանայք մեծ ուժ են ներկայացնում: Ստուբրի մեջ պահել այդ պահել այդ ուժը, նշանակում ե հանցաղործություն թույլ տալ: Մեր պարտականությունն է առաջ քաշել կանանց կոլտնտեսություններում, զործի զնել այդ ուժը:

Իհարկե, խորհրդային իշխանությունը մոտիկ անցյալում փոքրիկ թյուրիմացություն ե ունեցել կոլտնտեսութիւնների հետ: Դործը վերաբերում եր կովկեն: Բայց այժմ կովի զործը կարգի յերաշեած, թյուրիմացությունը վերացել և (յերկարան ծափեր): Մենք կարողացանք համել այն դրության, վոր կոլտնտեսականնե-

րի մեծ մասն իր անտեսության մեջ արդեն մի կով ունի: Կանցնի 1—2 տարի ևս, և դուք չեք դանձ մի կոլտնտեսական, վոր ի՛ կովը չունենա: Մենք, բայլչեկեններս, կայխատենք, վոր բոլոր կոլտնտեսականները մեկական կով ունենան (յերկարան ծափեր):

Ինչ վերաբերում և կոլտնտեսութիւններին իրենց, ապա նրանք պետք ե հիշեն կոլտնտեսությունների ուժը և նշանակությունը կանանց համար, պետք ե հիշեն, վոր միմիայն կոլտնտեսության մեջ հնարավորություն ունեն նրանք հավասար մնելու աղամարդկանց: Առանց կոլտնտեսությունների՝ անհավասարություն, կոլտնտեսություններում՝ թող հիշեն այդ ընկեր կոլտնտեսությունները, թող հիշեն աչքի լույսի պես պահեն նրանք կոլտնտեսությունները, թող իրենց աչքի լույսի պես պահեն նրանք կոլտնտեսական կարգերը (յերկարան ծափեր):

Եերկու խոսք կոլտնտեսությունների կոմյերիականների ու կոմյերիատուհիների մասին: Յերիտասարդությունը մեր ապագան է, մեր հույսն և, ընկերներ: Յերիտասարդությունը պետք ե վուխարինի մեղ, ծերերիս: Նա պետք ե հաղթական վախճանին հասցնի մեր դրոշը: Գյուղացիների մեջ քիչ չեն այնպիսի ծերեր, վորոնք ծանրաբեռնված են հին բեռով, վորոնք ծանրաբեռնված են հին կյանքի սովորույթներով և հիշաղություններով: Հասկանալի չե, վոր նրանց վոչ միշտ հաջողվում ե համենել կուսակցության և խորհրդային իշխանության հետեւից: Այլ բան և մեր լերիտասարդությունը: Նա պատ ե հին բեռով, նա ամենից ավելի հեշությամբ ե յուրացնում լինինյան պատզամները: Յեզ հենց այդ պատճառով, վոր յերիտասարդությունն ամենից ավելի հեշությամբ ե յուրացնում լինինյան պատզամները, հենց այդ պատճառով նա կոչված ե առաջ տանելու հետ մնացողներին և տատանալողներին: Ճիշտ ե, նրան պակասում են զիտելիքները: Բայց զիտելիքները կարելի յե ձեռք բերել: Այսոր նրանք չկան, վաղը կլինեն: Աւատի նրանց խնդիրն ե՝ սովորել, գարձյալ սովորել լենինիզմը: Ընկեր կոմյերիատուհիներ և կոմյերիատուհիներ, սովորեցեք բայլչեկեղմը, առաջ տարեք տատանվողներին: Ավելի քիչ շաղակատեցեք, ավելի շատ աշխատեցեք՝ և ձեզանից անպայման բան դուրս կցա (ծափեր):

Մի քանի խոսք մենատնտեսների մասին: Մենատնտեսների մասին այստեղ քիչ խոսեց: Սակայն այդ չի նշանակում, թե աշխարհ հումս մենատնտես չկա այլեւ: Վո՞չ, չի նշանակում: Մենատնտեսներ կան, նրանց չի կարելի հաշվեց զուել, վորովհետև

նրանք մեր վաղիւ կոլտնտեսականներին են։ Յես զիտեմ, վոր մեծ նատնտեսների մի մասը վերջնականապես այլասերվել ե և անցիլ սպեկուլյացիայի։ Յերկի դրանով ե բացատրվում այն, վոր մեր կոլտնտեսականները մենատնտեսներին մեծ ընարությամբ են ընդունում կոլտնտեսությունների կաղմի մեջ, իսկ յերբեմն բոլորով վիճակին չեն ընդունում նրանց։ Այդ ճիշտ ե իհարկե, այստեղ առարկում չի կարող լինել։ Բայց կա մենատնտեսների մի ուրիշ մասը՝ մեծամասնությունը, վորը սպեկուլյացիայի չի դիմել, այլ իր հացը գատում ե աղնիվ աշխատանքով։ Այդ մենատնտեսները թեարևու կուպեյին կոլտնտեսություն մտնել։ Բայց նրանց մի կողմից խանգարում ե իրենց տարակաւանքը՝ կոլտնտեսական ուղու ճիշտ մինելու նկատմամբ, մյուս կողմից՝ այն խստությունը, վոր գոյությունն ունի այժմ կոլտնտեսականների մեջ մենատնտեսների նկատմամբ։

Իհարկե, պետք ե հասկանալ կոլտնտեսականներին, մտնել նրանց դրության մեջ։ Այս տարբիների ընթացքում նրանք շատ վիրավորանք ու ծաղը են տեսել մենատնտեսների կողմից։ Սակայն վիրավորանք ու ծաղը վճռական նշանակություն չպետք ե ունենա այստեղ։ Վատ ե այն դեկավարը, վորը չդիմե մոռանալ վիրավորանքը և վորն իր զդացմունքներն առելի բարձր ե դասում։ Քանի կոլտնտեսական գործի շահերը։ Յեթև դուք ուղում եք դեկավար լինել, պետք ե կարողանաք մոռանալ առանձին մենատնտեսաների մեղ հասցրած վիրավորանքը։ Յերկու տարի առաջ յես մի նամակ ստացա վոլգայի մի այրի գեղջկուհուց։ Նա դանդատվում եր, թէ իրեն չեն ուղում կոլտնտեսություն ընդունել, և ինձանից ուժանդակություն եր պահանջում։ Յես հարցում արի կոլտնտեսությանը։ Կոլտնտեսությունից ինձ պատասխանեցին, թէ չեն կարող ընդունել նրան կոլտնտեսության մեջ, վորովհետեւ նա վիրավորել եր կոլտնտեսական ժողովը։ Ինչո՞ւմն ե բանը։ Նրանում, վոր զյուղացիների այն ժողովամ, վորտեղ կոլտնտեսականները կոչ են անում մենատնտեսներին մտնել կոլտնտեսություն, նույն այդ այրին, ի պատասխան այդ կոչին բարձրացրել ե իր փեշերը և առաջ ե՝ ահա մեղ կոլտնտեսություն, ստացեք (ուրախ աշխուժություն, ծիծաղ)։ Անտարակույս, նա սիսալ ե վարպել, վիրավորել ե ժողովը։ Բայց մի՞թե կարելի յէ մերժել նրան կոլտնտեսության մեջ ընդունել, յեթե նո մի տարի հետո անկեղծորեն զշալով, ընդունել ե իր սիսալ։ Յես կարծում եմ, վոր չի կարելի մերժել

Յետ արդակես ել գրեցի կոլտնտեսությանը։ Այրուն ընդունեցին կոլտնտեսության մեջ։ Յեվ ի՞նչ, Դուրս յեկավ, վոր նա աշխատում ե ներկայումս կոլտնտեսության մեջ վոչ թէ վերջին։ այլ առաջին շարքերում (ծափեր)։

Ահա մեր մի որինակ ես, վորը վկայում ե, վոր զեկավարաները, յեթե նրանք ցանկանում են իրոք զեկավարներ մնալ, պետք ե կարողանան մոռանալ վիրավորանքները, յեթե այդ պահանջում են գործի շահերը։

Նույնը պետք ե ասել նաև մենատնտեսների մասին առհասարակ։ Յես դեմ չեմ, վոր կոլտնտեսություն ընդունեն ընտրությամբ։ Բայց յես դեմ եմ, վոր անխտիր բալոր մենատնտեսների առաջ փակեն կոլտնտեսությունների ճանապարհ։ Դա մեր, բայց չերկան քաղաքականությունը չի։ Կոլտնտեսականները չպետք ե մոռանան, վոր վոչ շատ ժամանակ առաջ ինքները մենատնտեսներ են յեղել։

Ի վերջո մի քանի հոսք Բեգնեչուկի կոլտնտեսականների նամակի մասին։ Այդ նամակը տպագրված եր և դուք յերեկ կարդացել եք։ Անպայման լավ նամակ ե։ Նա վկայում ե, վոր մեր կոլտնտեսականների մեջ քիչ չեն կոլտնտեսային գործի փորձված ու գիտակից կաղմակերպիչներ ու ագիտատորներ, վորոնք մեր յերկրի պարծանքն են։ Սակայն նամակում կա մի սիսալ տեղ, վորի հետ վոչ մի կերպ չի կարելի համաձայնել։ Բանն այն ե, վոր Բեղենչուկի ընկերները կոլտնտեսության մեջ կատարած իրենց աշխատանքը համարում են համեստ և համարյա աննշան աշխատանք, իսկ Տուտորների ու առաջնորդների աշխատանքը, վորոնք յերբեմն յերեք արշինանց ճառեր են ասում՝ ծեծ, ստեղծագործ աշխատանք։ Կարելի՞ յէ արդյոք համաձայնել զրա հետ։ Վոչ, ընկերներ, զրա հետ վոչ մի կերպ համաձայնել չի կարելի։ Տնեղնչուկի ընկերներն այստեղ սիսալ են թույլ տվել։ Հնարավոր ե, վոր նրանք իրենց համեստությունից են թույլ տվել այդ սիսալը, սակայն զրանից սիսալը չի դադարում սիսալ լինելուց։ Անցել են այն ժամանակները, յերբ առաջնորդները համարվում ելին պատմության միակ ստեղծողները, իսկ բանվորներն ու գյուղացիները հաշվի չենին առնվում։ Ժայռությունների և պետությունների բախտը հետ մա վճռում են վոչ միայն առաջնորդները, այլ նաև և առաջ և զիմավորապես աշխատավորների միլիոնավոր մասսանները։ Բանագործները և գյուղացիները, վորոնք առանց աղմուկի և աղաղակի

կասուցում են գործարաններ, հանքահորեր; յերկաթուղիներ; կողմանակառություններ, խորհանուասություններ, ստեղծում են կյանքի բոլոր բարիքները, կերակրում ու հաղցնում են ամբողջ աշխարհին, — ահա թե ովքեր են նոր կյանքի իսկական հերոսները և ստեղծողները: Այս մասին ինչպես յերեսում և մոռացել են Բեզզենչուկի մեր ընկերները: Լավ չե, յերբ մարդիկ գերազնահատում են իրենց ուժերը, սկսում են պարծենալ իրենց ծառայություններով: Այդ տանում և դեպի պարծենկոտություն, իսկ պարծենկոտությունը լավ բան չե: Բայց ավելի վատ ե, յերբ մարդիկ սկսում են թերապնահատել իրենց ուժերը, չեն տեսնում, վոր իրենց «Համեստ», «աննկատելի» աշխատանքն իրոք հանդիսանում է մեծ ստեղծագործ աշխատանք, վորը վճռում է պատմության բախտը:

Ես կյանկանայի, վոր Բեզենչուկի ընկերներն իրենց նամատին արված իմ այս փոքրիկ ուղղմանը հավանություն տային:

Յեկեք, ընկերնե՛ր, վերջացնենք սրանով: (Յերկար ժամանակ չուզ ծափեր, վորոնիք փոխվում են ովացիայի: Բոլորը վստիքի յեն կամքնում և վողունում են ընկ. Ստալինին: «Ուոա» աղաղակներ: Դահլիճում լսվում են բացականչություններ. — «Կեցցե՞ ընկեր Ստալինը: Ուոա», կեցցե՞ առաջավոր կոլտնտեսականը: Կեցցե՞ մեր առաջնորդ ընկեր Ստալինը»):



ԳԻՐ 25 ԿԱՊ.

РЕЧЬ ТОВ. СТАЛИНА
на первом Всесоюзном съезде
колхозников-ударников
19-го февраля 1933 г.
Издательство ЦККП (б) и
Партиздач 1933 Эривань